տեսութեամբ նայել: *) Այդ միջոցը պէտք է գործ դնել աշունքից սկսած մինչև գարնան սկիզբները, մինչև մորեխի գետնի երեսը յայտնվիլը: Դրա համար պէտք է որոնել մորեխի սերմ ածած տեղերը և գետինը շրջելով (հերկելով) հասցնել սերմի ծրարները և փչացնել նրանց: Սերմի ծրարներ որոնելու համար մարդուն կարող են օգնել և խոզերը ու այլ ընտանի կենդանիները (թռչունները):

Մորեխի դէմ մաքառելու համար ամենահաստատ միջոցն է նորանց կոտորելը դեռ. հետևակ ժամանակում, այն է թևաւորվելուց առաջ: Դրա համար զանազան կերպեր են գործ դնվում, այստեղ կը յիշենք միայն ամենադիւրինները: Վաղ գարնան պէտք է խիստ ուշադրութեամբ վերահսկողութիւն անել անցեալ տարում մորեխ եղած տեղերի վրա, մանաւանդ այն տեղերի վրա, ուր յայտնի է որ մորեխը սերմ է թողել: Հէնց որ նկատվի սերմերից մորեխի դուրս գալը, հարկաւոր է անմիջապէս հարկաւոր քանակութեամբ մարդիկ դուրս գան դաշտը և դուրս եկածը կոտորեն՝ հէնց նորանց բոյների մօտ: Դրանից յետոյ, երբ արդէն մորեխը տարածված լինի, հարկաւոր է երկար փոսեր և առուներ փորել դաշտի վրա և ցախերով ու աւելներով մորեխը այդ փոսերի մէջ քշել ու հաստ փայտերով լաւ ջարդել և ապա փոսերը լցնել հողով: Գիշերով մորեխները հաւաքվում են կոյտ կոյտ թփերի տակ, վաղ առաւօտեան հեշտ կարելի է նորանց ջարդել այն կոյտերում, դրա համար օգտակար ես է երեկոյեան արտերի վերա տեղ-տեղ յարդ կամ ցախ թողնել և գիշերով մորեխները նորանց վրա հաւաքվելուց առաւօտեան կրակ տալ, ի հարկէ չորս կողմից պահելով որպէս զի նոքա չը հեռանան. վատ չէ եթէ յարդի վերա հէնց փոքր էլ նաւթ ածվի: Մի և նոյն միջոցում հարկաւոր է և ընտանի խոզեր ու այլ կենդանիներ ու հաւեր դաշտը դուրս բերել, այլ և հովանաւորել դաշտային թռչուններին:

Ահա այս միջոցների գործադրութեան մասին պիտի հոգայ այժմ ամենայն մի շինական հասարակութիւն, եթէ չէ ուզում որ անցեալ տարվայ պէս այս տարի էլ իր բերքը մորեխին զոհվի և ինքը գլուխը ծռած մնայ իր տարեկան ապրուստից զուրկ: Այստեղ չեմ կարող չը յիշել, որ շատ անգամ գիւղացու. սնոտիապաշտութիւնն է արգելք լինում եթէ նա չէ կարողանում պարտ ու պատշաճ կերպով դիմադրել վտանգին. նա ամենայն մի պատահար Աստուծոյ բարկութեանն է վերաբերում և կուրօրէն գլուխը ծռած լռիկ հանդիստ է ձևանում այն պատահարներին՝ չաշխատելով պահպանել իր քրտինքով հասցրած բերքերը: Գիւղական քահանաների և ուսուցիչների պարտաւորութիւնն է հանել ժողովրդին այդ նախապաշարմունքներից և ժամանակին յորդորել նրանց գործի կանգնել, իրանց դառն աշխատութիւնը խնայելով:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

15 մարտի

Ազգային պարբերական թերթերում կարդալով մեր Վանայ համազգայնոց թշուառ դրութեան ենթարկվիլը մեզ անհրաժեշտ պարտք համարեցինք մասամբ և եթ օգնութեան ձեռն կարկառել նրանց, յուսալով, որ մեր այս չնչին նուէրն, այրի կնոջ լումայի նման ընդունելութեան կարժանանայ, ուստի անցեալ բարեկենդանի հինգշաբթի օր, երբ տեղւոյս եկեղեցում հանդիսաւոր կերպով կատարվում էր Վարդանանց քաջ նահատակների տարեդարձը, որին, ՚ի թիւս այլոց, հանդիսատես էինք և մենք, կազմելով ստորագրութիւն՝ հրաւիրեցինք մի քանիսին մեր քաղաքացիներից, որոնք մեզ ծանօթ էին, որոնք ուրախութեամբ սրտի յարգելով մեր առաջարկութիւնն՝ իրանց կարեաց չափով ստորագրեցին և որոնցից նուիրածի գումարը եղաւ վաթսուն րուբլի և եօթանասուն և հինգ կոպէկ (60 ր. և 75 կոպէկ), այս գումարից հանելով փօստայի ծախս 75 կոպէկ՝ մնացած վաթսուն րուբլին, նուիրատուների ցուցակի հետ, ուղարկելով բարեջան խմբագրութեան՝ խոնարհաբար խնդրում ենք հասուցանել մեր վերոյիշեալ թշուառավիճակ համազգայիններին, որի միջոցաւ հարկն է. իսկ նուիրատուների անունները բարեհաճեցէք տպագրել ձեր լրագրի մի անկիւնում.

Վանայ սովելոց համար նուիրատուների ցուցակը.

Մարտիրոս և Եզեկ եղբայրներ Գրիգորեան 4 ր., Աղէքսանդր Խաչատրեան 4 ր., Պօղոս Կիրակոսեան 2 ր., Պօղոս Սիմէօնեան 1 ր., Յակովբ Քեօսապալեանց 3 ր., Յովսէփ Պօղոսեան 1 ր., Միքայէլ Թառօյեանց 1 ր., Աղաբէկ Թօփչեանց 1 ր., Պօղոս Ասլանեանց 1 ր., Մովսէս Սարգսեան 1 ր., Ստեփան Պօղոսեան 1 ր., Մանուկ Կարապետեան 1 ր., Յովհաննէս Թառօյեանց 2 ր., Մելքոն Յարութիւնեան 50 կ., Խաչատուր Աբրահամեան 1 ր., Յովհաննէս Արզարեանց 50 կ., Սիմէօն Սարգսեան 20 կ., Աղաբէկ Կարապետեան 20 կ., Խաչատուր Յովհաննէսեան 20 կ., Խաչատուր Շահրաղեան 29 կ., Սմբատ Քէօսայեանց 1 ր., Մկրտիչ Ասլանեան 30 կ., Յարութիւն Շահինեանց 1 ր., Ռուբէն Ջալալեանց 1 ր., Գրիգոր Շահրազեանց 2 ր., Առաքել Մուսիկեանց 1 ր., Արտաշէս Տէր-Յակովբեան 3 ր., Յակովբ Մատինեանց 2 ր., Թադէոս Յակովբեան 20 կ., Յովհաննէս Ամիրջանեանց 1 ր., Աւետիս Կարապետեան 1 ր., Յովհաննէս Պարունակեանց 50 կ., Արշակ Ատումեանց 1 ր., Ստեփան Չօլախեանց 40 կ., Արշակ Աստոյեանց 20 կ., Նիկօլայ Աղաբաբեան 1 ր., Մկրտիչ Սիմէօնեան 1 ր., Հայ ոմն 1 ր., Վրթանէս Քահանայ Տէր-Գէորգեանց 1 ր., Յովհաննէս Ճորողեանց 2 ր., Եղիսաւետ Վասիլով (յոյն) 1 ր., Ազգասէր հայ ոմն 5 ր., Գէորգ Սիմէօնեան 3 ր., Հացագործ Դաւիթ 3 ր., Գրիգոր Յովսէփեան 15 կ., Կարապետ Յովհաննէսեան 20 կ., Մկրտիչ Մարաբեանց 1 ր. Գումարն է 60 ր.

Մարտիրոս Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալցխա, 24 մարտի

Ճանաչելով թիւրքահայերին, «Մ շ ա կ ը» վաղուց արդէն թերահաւատութեամբ էր վերաբերվում նոցա մէջ գործողների ընդունակութեան. Սովի այժմեան սպառնալիքը և Հայաստանի տագնապը արդարացրին կրկին ես մի անգամ մեր լրագրի միտական կասկածները. գրեթէ երեք ամսվայ ընթացքում, քանի մահը և սարսափը տիրապետում է Հայաստանի մէջ, ոչինչ կատարեալ և կանոնաւոր տեղեկութիւններ չենք կարողանում ստանալ այնտեղից, մինչդեռ Վան, Երզրում և միւս տեղեր գտնվում է մի ամբողջ լէգէօն վայրահաչ մըրոտողների, որոնք ուրիշ ժամանակ լրագիրների դանկը են տանում իրանց «հոսոսական» դարդակաբանութիւններով. Այժմ այդ մրոտող հոսոսները կարծես բոլորն էլ սովից կոտորվել են, ոչինչ չեն գրում մեզ և ոչ մի լրագրին, մինչև այն ժամանակ, երբ այստեղից այնտեղից լսելով մի կերպ կարողանում ենք իմանալ որ Վանայ մէջ կազմված կօմիտէտը ոչ միայն շատ քիչ է հոգ տանում գիւղական ազգաբնակութեան վիճակի վրա, այլ ես հոգ չէ տանում ընտրել իրան գործակից գոնէ մի ընդունակ և ժրաջան մարդ, ինչպէս զորօրինակ պ. Մկրտիչ Փորթուգալեանն է. Երկինքը ինչպէս չի կարող փոխվել, տաճկահայերն էլ անուղղելի են. Նոքա միշտ թոյլ են, միշտ տարտամ, միշտ դարդակաբան. Եւ նոցա անշնորքութեան ենք պարտական անշուշտ այն բօթալից իրողութեամբ, որ հաղորդում է ինձ այսօր կամսարականը Վանից գրած իր մասնաւոր նամակում. Նա ասում է որ գիւղական ազգաբնակութիւնը մնալով անուշադիր սաստիկ կոտորվում է, այնպէս որ Նորգիւղ և Բաշկալայ գաւառները գրեթէ բոլորովին ջնջվել են. Նամակը գրած է փետրվարի վերջերում, ուրեմն որչափ դժբախտութիւններ է պատահել այն ժամանակից յետ, մենք դեռ այդ չը գիտենք. Վասն որոյ տեսնելով տաճկահայերի այդչափ տարտամութիւնը, «Մ շ ա կ ի» խմբագրութիւնը այլ ես չը պիտի յապաղէ. մինչև պ. Ամիրխանեանի արած բոլոր առաջարկութիւնների իրագործվիլը թող չտայէ խմբագրութիւնը անմիջական հեռագրի յարաբերութիւն սկսել Վանի մէջ գործող կօմիտէտի հետ, ընտրելով իրան ներկայացուցիչ այնտեղ պ. Մկրտիչ Փորթուգալեանին և տալով կօմիտէտին իր պարբերական հրահանգները. Արովհետև գործողների անգլխութիւնից հայրենիքը զրկվում է ամեն օր մի քանի տասնեակ զաւակներից, մանաւանդ որ մեր սրտացաւ նուիրատուները անշուշտ մեծ երախտագիտութեամբ կը համաձայնվեն որ «Մ շ ա կ ի» խմբագրութիւնը յանձն առնէ մի այդչափ մարդասէր հոգատարութիւն անել հեռագրական ճանապարհով, հարկաւոր ծախքը անելով նուիրատուութիւնների գումարից և տպելով լրագրի մէջ բոլոր ստացած տեղեկութիւնները և տուած համառօտ հրահանգները. Եւ այդպէս գուցէ մի երկու հարիւր րուբլի մսխելով հեռագիրների վրա, կարելի կը լինի նախ՝ բաւականութիւն տալ ժողովրդի լարված տրամադրութեանը, որ առաջ է գալիս կատարեալ անյայտութիւնից սովամահների մասին. երկրորդ՝ նուիրատուութեան գործին աւելի ուժգին ընթացք տալ. երրորդ՝ մի ամբողջ ազգի փրկութեան գործը չը թողնել միայն որ և իցէ մեզ անյայտ Երեմիա եպիսկոպոսի կամ մի պաշտօնական գործակատարի յուսով....

Վայրկեանները թանգ՚են. գործող չը կայ, վասն որոյ ցանկալի կը լինէր որ այս խորհուրդը անտես չանէր «Մ շ ա կ ի» խմբագրութիւնը.

Գր. Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, մարտի 20-ին

Յարգոյ խմբագիր, ձեր պատւելի լրագրի էջերում կարդալով թղթակցութիւններ Տաճկաստանից, այն անտանելի դրութեան մասին, որոյ մէջ գտնվում են մեր արիւնակից եղբայրները, սովից նեղացած, ես սրբազան պարտք համարեցի բանալ հանգանակութիւն իմ ծանօթներիս և բարեկամներիս մէջ, որից գոյացաւ 61 րուբլի, որ և ուղարկում եմ ներփակեալ նամակիս հետ. խնդրեմ հասցնէք ուր որ հարկն է.

Ահա նուիրատուների ցուցակը. Տ. Աննա Լմինեան 5 ր., տ. Ֆեբրոնեա Ավալեան 3 ր., տ. Սրբուհի Կուրծեան 2 ր., տ. Սրբուհի Աբուլեան 2 ր., տ. Եղիսաբէթ Տէր-Նիկողոսեան 1 ր., տ. Բարբարէ Փուղինեան 1 ր., տ. Քալիա Ղլամեան 1 ր., տ. Վարդուհի Խուդադեան 1 ր., օր. Կատարինէ Տէր-Ստեփանեան 2 ր., օր. Դարիայ Սահակեան 2 ր., օր. Վարդուհի Սանթրուսեան 1 ր., օր. Մարիամ Մարկոսեան 1 ր., օր. Մարիամ Ալիբէկեան 1 ր., օր. Մարիամ Մաչումեան 1 ր., Գէորգ Խատամեանանց 5 ր., Դաւիթ Խաբազեան 3 ր., Յակոբ Փիրալեան 6 ր., Արտէմ Սևանեան 3 ր., Յովհաննէս Սեմիրեան 3 ր., Սիմէօն Պէտրոսեան 2 ր., Գէորգ Ծովեանեան 1 ր., Հախվէրդ Հախվէրդեան 1 ր., Բարսեղ Տէր-Նիկողոսեան 1 ր., Սարգիս Դիդարեան 1 ր., Մի ոմն 1 ր., Սողոմոն Սուսանեան 3 ր., Աղէքսանդր Սուսանեան 3 ր., օր. Աննա Սուսանեան 2 ր., օր. Մարիամ Սուսանեան 2 ր. Ընդամենը 61 րուբլի.

Օր. Մարիամ Սուսանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ագուլիս, 17 մարտի

Բացելով հանգանակութիւն Ագուլիսի տիկինների մէջ, ժողովեցի 415 ր., որի մի մասը,—323 ր. տիկինների կողմից, իսկ 92 ր. թատրօնասէրների կողմից նուիրվում է յօգուտ Վանայ սովելոց.

Ընդ սմին ուղարկում եմ ձեզ մի փոխանակագիր 415 ր., որ պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեանից ըստանաք, խնդրում ենք շուտափոյթ հասցնել ուր հարկն է.

Նուիրատուաց ցուցակը հետևեալ անգամ կուղարկեմ ձեզ, խնդրելով որ անպատճառ տպէք.

Կատարինէ Տէր-Մկրտչեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք 10 ր. յօգուտ «Արարատեան» ընկերութեան Բագուի նահանգի բնակիչ պ. Յովսէփ Ծատուրեանցից.

—

ԻԳԴԻՐԻՑ հետևեալ անձինք ուղարկում են մեզ 10 րուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան. Ա. Կանայեանց 3 ր., Լ. Տէր-Յարութիւնեանց 1 ր., Մ. Մնացականեանց 1 ր., Ս. Սողոմոնեանց 2 ր., Փ. Շաբրիմանեանց 1 ր., Պ. Հայրապետեանց 1 ր., Ն. Լահանեան 1 ր. Ընդամենը 10 րուբլի.

—

Երէկ, 27-ին մարտի կրկին ուղարկեցինք 2000 րուբլ յօգուտ Թիւրքիայի հայ սովելոց Կիւլէնկեանի առևտրական տան ձեռքով. վերջին անգամ փող ուղարկելուց յետոյ մնում էր խմբագրութեան մէջ 59 ր. 76 կ. Դրանից յետոյ հաւաքվեցաւ 2026 ր. 50 կ., որ միասին կանի 2086 ր. 26 կ. Այս գումարից այժմ 2000 ր. ուղարկելով, մնում է խմբագրութեան մէջ, հեռագրի ծախսը 3 ր. 25 կ. հանած՝ 83 ր. 1 կ. Ուրեմն մինչև այժմ ուղարկել ենք յօգուտ Հայաստանի սովատանջների ընդամենը 18,000 րուբլ.

—

Այսօր, մարտի 29-ին կը լինի ԹԻՖԼԻՍԻ թատրոնում ռուսաց օպէրայի առաջին ներկայացումն, կը տան «Տրավիատա» օպէրան.

—

ԳՕՐՈՒՑ ստացանք 1000 րուբլ յօգուտ Վանի սովելոց. Նուիրատուների ցուցակը կը տպենք «Մշակի» հետևեալ համարներից մինում.

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻ հայ քահանայ Հայր Կուսիկեանց ուղարկել է մեզ 30 րուբլ յօգուտ Վանի սովելոց, որ ժողովեցաւ Վլադիկավկասում պ. Յ. Ղարախանեանի տանը ճաշի ժամանակ. Ահա նուիրատու անձանց ցուցակը. Յովհաննէս Ղարախանեանց 5 ր., Գէորգ Յարութիւնեանց 5 ր., Յովհաննէս Աբրահամեանց 5 ր., Կարապետ Բաջաղեանց 5 ր., Վարդան Տէր-Աբրահամեանց 3 ր., Գրիգոր Վարանեանց 2 ր., Աղէքսանդր Բաղդասարեանց 5 ր. Ընդամենը 30 րուբլ.

—

ՓՕԹԻՈՒՄ բնակվող պ. Յ. Թիւրբեան դարձեալ ուղարկել է մեզ 100 րուբլ Վանի սովատանջների համար.

—

Պ. բժիշկ Լևոն Տիգրանեանց ուղարկել է մեզ 25 րուբլ, որպէս զի հասցնենք այդ գումարը Վանի սովալլուկներին.

—

Վերջապէս Ռուբինեան վարդապետի փողերից 1000 րուբլ գործ է դրվում յօգուտ Վանի սովատանջների. Այդ փողերը պ. պ. Ա. Յովհաննիսեանին և Մանթաշօվին էին յանձնված. Որքան մեզ յայտնի է, այդ պարոնները դարձեալ փողեր ունեն պահած, որ Ռուբինեան վարդապետը նրանց յանձնել է. Հետաքրքիր է իմանալ, բացի այդ փողերից, որքան փող է հաւաքել դարձեալ Ամբրոսիոս Ռուբինեան իր ճանապարհորդութեան մէջ Ռուսաստանում. Եւ ում համար է պահում նա այդ փողերը. աւելի լաւ չէր լինի բոլորն էլ տալ յօգուտ սովատանջների. Միթէ գերապատիւ վարդապետը կամենում է մեզ դարձեալ այն յոյսերով կերակրել, թէ հիմնելու է մի Ռուբինեան երկրագործական (երևակայական) դպրոց Երզրումի մէջ. Երևի այն պարոնը, որի ազգանունը արդէն հրատարակված էր, որպէս ապագայ տեսուչ չեղած ուսումնարանի, դեռ երկար կը սպասի, մինչև ըսկսի իր պաշտօնի վարելը.

—

ԻԳԴԻՐԻ հայ հասարակութիւնը հրապարակաւ յայտնում է իր շնորհակալութիւնը գաւառապետ Բագարատ Հասան-Ջալալեանցին նրա հոգատարութիւնների համար, որոնցով պարոնը աշխատեց ամբողջ Սուրմալուի վիճակի ժողովրդին ազատել հացի թանգութիւնից, թէ կառավարութիւնից ալիւր բերել տալով և աղքատներին բաժանելով, և թէ նախապէս զգուշացնելով ժողովրդին, որ իրանց ձեռքում ունեցած պաշարեղէնները չը սպառեն վաճառելով կամ վատնելով. Նոյն պարոնի շնորհիւ Սուրմալուի վիճակում տիրում է կատարեալ խաղաղութիւն. և վերջին օրերում ձերբակալված է քրդերի գլխաւոր աւազակապետը, որ կոչվում է Ալօ-Ղաչաղ.

—

Մեզ գրում են ԲԷԳԼԱՐԲԵԱՆԴԻՑ, որ 1878 թւին Արէշի գաւառապետ պ. Կիկօձէի խնդրատուով և Նուխիի յաջորդ արժ. Գրիգորիս վարդապետի աշխատանքով Բէգլարբեանդի հայաբնակ գիւղում հաստատվել է մի հոգևոր ծխական ուսումնարան, որի մէջ այժմ սովորում են 42 աշակերտներ.

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են, որ ժողովրդից մի քանի նենգաւոր մարդիկ սկսել են խռովութիւններ յարուցանել նոր կարգված երեք հոգաբարձուների և հացավաճառ Եղիազարեանի դէմ, որոնց յանձնված էր Էջմիածնի վանքից ըս-

---

*) Ինչպէս լսեցինք Ելիսաւէտպօլում գործադրվում է այդ եղանակը և արդէն հաւաքած են 30 փթաչափ սերմ. այդ մի գեղեցիկ բացառութիւն է, որ կարելի է վերաբերել միայն հաւաքած սերմի համար խոստացված վարձին.